# Քաղաքական խոսույթի հիման վրա հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրների վարչակարգերի գնահատման հնարավորություններն ու խնդիրները

ԷՄԻԼ ՕՐԴՈՒԽԱՆՅԱՆ
*Երևանի պետական լեզվահասարակագիտական համալսարան*

Ստացված է 16.12.2014
Ընդունված է 5.05.2015

*Հոդվածում ուսումնասիրվում են քաղաքական խոսույթի հիման վրա վարչակարգերի գնահատման հեռանկարները՝ գնահատման արդյունքների ճշտության մեծացման տեսակետից: Խնդրի արդիականությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ նոր աշխարհակարգի ձևավորման նպատակով մրցակցության խորացման և ժողովրդավարական քաղաքական խոսույթի կեղծ կիրառումների հետևանքով առաջացող նոր մարտահրավերների պայմաններում գնահատման դասական մեթոդների արդյունավետությունը նվազում է: Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ թեև առկա են քաղաքական խոսույթի կիրառմամբ վարչակարգերի բոլոր երեք տեսակներին պատկանող դեպքերի ուսումնասիրություններ, սակայն դրանք չեն բացահայտում հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրների վարչակարգերի գնահատման նպատակով քաղաքական խոսույթի կիրառման առանձնահատկություններն ու օրինաչափությունները: Այդ խնդրի լուծման նպատակով առաջարկվում է քաղաքական խոսույթի հիման վրա գնահատել հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրների վարչակարգերը՝ լիակատար ընդգրկմամբ: Այդ արդյունքների հավաստիությունը կարող է նահատվել՝ համեմատելով դասական մեթոդներով կատարված գնահատման արդյունքների հետ:,*

**Բանալի բառեր**
Քաղաքական մշակույթ, քաղաքական խոսույթ, քաղաքական վարչակարգ, կառուցվածքային վերլուծություն, հետխորհրդային տրանսֆորմացիա:

Նոր աշխարհակարգի ձևավորման համար մրցակցությունը զգալիորեն մեծացրել է շահադիտական գործոնի ազդեցությունը հասարակական գործընթացների, մասնավորապես, հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրներում ձևավորված վարչակարգերի գնահատման և դասակարգման վրա: Այդ ազդեցությունը նվազագույնի հասցնելու առավել արդյունավետ ճանապարհը գնահատման նոր՝

հնարավորինս ճշգրիտ մոտեցումների և մեթոդների կիրառումն է: Խնդիրն առավել բարդ է այն դեպքում, երբ գնահատման առարկան բնութագրվում է ոչ միայն քաղաքական համակարգի և դրա ինստիտուտների, իշխանության կազմակերպման իրավական նորմերով և կառուցվածքային մեխանիզմներով, այլև արժեքներով, վարքագծով և այլն: Մասնավորապես, Խ. Լինցը և Ա. Ստեպանը առաջարկում են կայացած ժողովրդավարությունը գնահատել երեք չափումներով՝ վարքային, արժեքային և սահմանադրական:[1] Առաջին երկու չափումներն ամբողջությամբ, իսկ սահմանադրականը՝ զգալիորեն (քանի որ այն վերաբերում է ոչ միայն սահմանադրության մեջ համապատասխան նորմերի առկայությանն, այլև դրանց նկատմամբ հասարակության վերաբերմունքին) պայմանավորված են քաղաքական մշակույթի դրսևորումներով: Պատահական չէ, որ հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրներում ձևավորված նոր վարչակարգերի բնույթը կանխորոշած գլխավոր գործոններից մեկն այդ հասարակություններում համապատասխան քաղաքական ժառանգության (մշակույթի) առկայությունն է:[2] Հետևաբար հասարակական համակարգերի, վարչակարգերի գնահատման ճշգրտության տեսակետից առանձնահատուկ նշանակություն ունեն քաղաքական մշակույթի գնահատման մեխանիզմներն ու սկզբունքները:

**Քաղաքական մշակույթի հետազոտման և գնահատման մոտեցումները**

Քաղաքական մշակույթի հետազոտման և գնահատման նպատակով կիրառվում են տարբեր մոտեցումներ՝ ինստիտուցիոնալ, համեմատական, արժեքային, համակարգային, հաղորդակցական, վարքաբանական և այլն, տարբեր տեսանկյուններից դիտարկելով քաղաքական ինստիտուտները, գործընթացները, արժեքները, գիտակցությունը, վարքագիծը և այլն:

---

[1] **Linz J., and Stepan A.,** Problems of Democratic Transition and Consolidation: Southern Europe, South America, and Post-Communist Europe. Baltimore, MD: Johns Hopkins University Press. 1996.

[2] **Թորոսյան Տ.,** Հասարակական համակարգի հետխորհրդային տրանսֆորմացիա, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2006, էջ 94:

Քաղաքական մշակույթի տեսության հիմնադիրներ Գ. Ալմոնդն ու Ս. Վերբան, քաղաքական մշակույթի կառուցվածքում կարևորելով քաղաքական կողմնորոշումները, դրանք բաժանում են երկու խմբի՝ ճանաչողական (ռացիոնալ) կողմնորոշումներ, որոնք ենթադրում են քաղաքական համակարգի, դրա ինստիտուտների, դրանց միջև կապերի մեխանիզմների իմացություն և ընկալում, և զգացական-հուզական (աֆֆեկտային) կողմնորոշումներ: Վերջին դասը ներառում է քաղաքական համակարգի և դրա ինստիտուտների գործունեությունն ապահովող տարրերի նկատմամբ վերաբերմունքը և գնահատողական կողմնորոշումները, որոնք արժեքային չափորոշիչների, գիտելիքների և հուզական կողմնորոշումների վրա հիմնված համոզմունքներ են:[3] Այս կողմնորոշումների ամբողջությունն, ըստ հեղինակների, լիարժեքորեն բնութագրում է հասարակության քաղաքական մշակույթը: Մեկ այլ մոտեցում է առաջարկել ՈՒ. Ռոզենբաումն՝ առանձնացնելով քաղաքական կողմնորոշումների երեք խումբ, որոնք թույլ են տալիս գնահատել տվյալ հասարակության քաղաքական մշակույթը. կառավարման ինստիտուտների նկատմամբ կողմնորոշումներ, այլ քաղաքական համակարգերի նկատմամբ վերաբերմունք, սեփական քաղաքական գործունեության վերաբերյալ կողմնորոշումներ:[4] Քաղաքական մշակույթի գնահատումը ձևայնացնելու նպատակով նա առաջարկում է առանձնացնել քաղաքական մշակույթի միջուկը կազմող տարրերը, որոնք հիմնական դերակատարություն ունեն «ազգի քաղաքական կարգի» ձևավորման գործում: Վ. Կրավչենկոն առաջարկում է քաղաքական մշակույթի տարրերի գնահատման այլ սկզբունք: Ըստ նրա, տարբեր տարրեր ունեն կայունության և գործառնության ոչ միանման աստիճան, թեև գտնվում են միմյանց նկատմամբ որոշակի համաենթակայության մեջ:[5]

---

[3] **Almond G., Verba S**., The Civil Culture: Political Attitudes and Democracy in Five Nations, Princeton University Press, Princeton, 1963, p. 14.

[4] **Rozenbaum W.,** Political Culture. New York, 1975, pp. 1-7.

[5] **Кравченко В.,** Политическая культура как отражение политико-коммуникативной реальности общества, Сборник научных трудов "Актуальные проблемы теории коммуникации", Изд-во СПбГПУ, СПб, 2004, сс. 135-153.

Քաղաքական կողմնորոշումների տեսանկյունից ուշագրավ է նաև Մ. Կաազեի մոտեցումը: Ըստ նրա, ժողովրդավարական պետության քաղաքական մշակույթի միջուկը քաղաքական համակարգի լեգիտիությունը/ ոչ լեգիտիմությունը որոշելուն ուղղված քաղաքական կողմնորոշումներն են՝ պետական-ազգային նույնականացումը, քաղաքական ինստիտուտների, էլիտայի և քաղաքական կարգի նկատմամբ վերաբերմունքը: Նա նաև առանձնացնում է ընթացիկ քաղաքականության, քաղաքական կամարտահայտման, քաղաքական մասնակցության, սեփական իրավունքների և պարտակա նությունների, քաղաքական բանիմացության նկատմամբ կողմնորոշումները:[6]

Քաղաքական մշակույթի էությունը և բնույթը առավել հաճախ փորձ է արվում բացահայտել կառուցվածքային վերլուծության միջոցով:[7] Այդ տեսնակյունից Է. Բատալովը քաղաքական մշակույթը դիտում է որպես քաղաքական վարքագծի մշակույթի և քաղաքական ինստիտուտների գործունեության մշակույթի հանրագումար:[8] Նա քաղաքական մշակույթի հավաքական բնութագիրը պայմանավորում է վարքաբանական մոտեցումով, որը քաղաքական վարքագիծը դիտում է որպես քաղաքագիտական հետազոտության առանցքային տարրերից մեկը: Պ. Շարանը քաղաքական մշակույթի կառուցվածքում առանձնացնում է փոխկապակցված և փոխգործակցող հետևյալ բաղադրատարրերը՝ արժեքային նախասիրություններ, հուզական հարաբերություններ և էմպիրիկ համոզմունքներ:[9] Հեղինակն այս դեպքում բացի արժեքային և հուզական տարրերից քաղաքական մշակույթի կառուցվածքի հիմքում ներառում է նաև զգայական փորձի հիման վրա

---

[6] **Kaase M.,** Sinn oder Unsinu des Kouzens Politische Kultur liir die vergleihende Politihforschung, *Kaase M., Klingemann H.-D. Wahlen und politisches System. Opladen*, 1983, pp. 145-171.

[7] **Зимин В.,** Структура политической культуры в оценках ученых, *Теоретические вопросы социально-гуманитарных наук 7, Вестник ВЭГУ,* 4 (48), 2010, 7-12.

[8] **Баталов Э.,** Политическая культура современного американского общества, Наука, М., 1990.

[9] **Шаран П.,** Сравнительная политология: пер. с англ., ч. 2, М., 1992, сс. 154-155.

ձևավորված համոզմունքները, որոնք, ի տարբերություն հուզական տարրերի, ավելի կայուն են և ամուր:

Վերոհիշյալ մոտեցումներում քաղաքական մշակույթի կառուցվածքային տարրերի համեմատությունը ցույց է տալիս, որ քաղաքական կողմնորոշումների տիպերը և կառուցվածքային այլ տարրեր հիմնականում համապատասխանում են միմյանց: Դա նշանակում է, որ քաղաքական մշակույթի գնահատման հարցում կառուցվածքային մոտեցումն ունի անհրաժեշտ մշակում և հուսալի է որպես գիտական հետազոտության մեթոդ: Այն թույլ է տալիս գնահատել քաղաքական մշակույթը՝ հիմնվելով նրա առանձին տարրերի և դրանց միջև փոխհարաբերությունների համեմատական վերլուծության վրա:

Քաղաքական մշակույթի գնահատման հարցում ուշագրավ է նաև Ռ. Ինգլհարտի մոտեցումը, ով քաղաքական մշակույթի գնահատումը պայմանավորում է տնտեսական և սոցիալական փոփոխություններով և զարգացումով: Նա համարում է, որ յուրաքանչյուր հասարակության քաղաքական մշակույթն արտացոլվում է տնտեսական զարգացածության մեջ: Տնտեսական զարգացումը, մշակութային և քաղաքական փոփոխությունները զուգահեռաբար են ընթանում՝ միևնույն տրամաբանությամբ: Դա հիմքեր է ստեղծում մշակութային և քաղաքական փոփոխությունների վերաբերյալ հիմնավորված կանխատեսումներ անելու համար: Ինգլհարտի գնահատմամբ ժողովրդավարությունը ավելի կայուն է այն երկրներում, որտեղ կան իրական պայմաններ, որպեսզի բնակիչներն իրենց համարեն բարեկեցիկ, լինեն գոհ իրենց կյանքից և վստահեն միմյանց:[10]

Հաճախ քաղաքական մշակույթն ուսումնասիրվում և գնահատվում է քաղաքական վարչակարգի միջոցով[11]՝ դիտարկելով նաև դրա կազմակերպման ձևերը: Մասնավապես, Ստրեժենևան նշում է, որ այն ժողովրդավարական քաղաքական վարչակարգերը, որտեղ ուժեղ է սոցիալ-մշակութային ինդիվիդուալիզմը (ազատական վարչակարգեր),

---

[10] **Inglehart R.,** Modernization and Post-modernization. Cultural, Economic, and Political Change in Societies. Princeton, 1997, p. 325.

[11] **Lijphart A.,** Democracies: Patterns of Majoritarian and Consensus Government in Twenty-One Countries. New Haven-London, 1984, 232 p.; **March J., Olsen J.**, Rediscovering Institutions. The Organizational Basis of Politics. New York, 1989.

իրենց կազմակերպմամբ ավելի մոտ են մաժորիտար կամ ագրեգատիվ մոդելին: Մաժորիտար քաղաքական կազմակերպմանը բնորոշ է երկու համեմատաբար հավասար, սակայն միմյանց դիմակայող հասարակական խմբերի գոյությունը: Այս կամ այն խմբի ներկայացուցիչները որոշ հերթագայությամբ փոխարինում են միյանց պետական կառավարման հարթությունում՝ այդպիսով հնարավորություն ստանալով իրացնել իրենց քաղաքական ծրագրերը: Դրա այլընտրանքն է հնարավոր մշտական փոխզիջումը մի քանի անհավասար խմբերի միջև, որոնց նպատակն ամբողջ հասարակությանը բավարարող որոշում գտնելն է: Այդ տարբերակն համարվում է կոնսենսուսային կամ ինտեգրատիվ: Քաղաքական կազմակերպման այդպիսի մոտեցումն ավելի բնորոշ է ժողովրդավարական վարչակարգերին, որտեղ ուժեղ է էգալիտար մշակույթը, ինչպես, օրինակ, սոցիալական ուղղվածություն ունեցող ժողովրդավարական վարչակարգերում: Մաժորիտար մոտեցումն ավելի բնորոշ է միասեռ մշակութային հարաբերություններ ունեցող հասարակություններին, իսկ կոնսենսուսայինը՝ բազմազան մշակութային հարաբերություններ ունեցող հասարակություններին:[12] Հարկ է նկատել, որ քաղաքական վարչակարգի շրջանակներում քաղաքական մշակույթի գնահատումը ներառում է նաև պետական կառուցվածքի տիպային առանձնահատկությունները, քանի որ միասեռ մշակութային արժեհամակարգ ունեցող երկրներին հիմնականում բնորոշ է ունիտար պետական կառուցվածքը, իսկ բազմամշակութային արժեհամակարգ ունեցող երկրներին՝ դաշնայինը: Ուստի քաղաքական մշակույթի գնահատման այս մոտեցման կիրառման դեպքում կարևորվում են հասարակության մեջ առկա մշակութային համասեռ և տարասեռ տարրերը:

Քաղաքական մշակույթի ուսումնասիրության և գնահատման գործում վերջին շրջանում ի հայտ են գալիս նաև այլ մոտեցումներ: Այդ տեսանկյունից ուշագրավ է Ռ. ԴեԼեոնի և Ք. Նաֆի մոտեցումը, որը հիմնվում է ինքնության համեմատական վերլուծության վրա: Այդ մոտեցման հիմքում այն վարկածն է, որ ինքնության տարրերը՝

[12] **Стреженева М.,** Политическая культура в различных интерпретациях: анализ специального понятия, *Общественные науки и современность*, 5, 2002, сс. 141-155.

ռասայական, կրոնական, դասակարգային և այլ, կոնկրետ ձևերով են ազդում քաղաքական իրականության վրա, ուստի այդ առանձնահատկությունները ձևավորում են նաև առանձնահատուկ քաղաքական մշակույթ: Ըստ աղմ, մի ռասայի, կրոնի, դասակարգի, սեռի պատկանող մարդու քաղաքական վարքագիծը օրինաչափորեն տարբերվում է մեկ այլ ռասայի, կրոնի, դասակարգի կամ սեռի պատկանող մարդու քաղաքական վարքագծից, ինչը նրանց դասում է տարբեր քաղաքական մշակույթների շրջանակներում:[13] Հետևաբար, կարելի է նշել, որ այս մեթոդաբանության տեսանկյունից քաղաքական մշակույթի վերը նշված կառուցվածքային (ինքնության) տարրերի առանձնահատ- կությունների հիմքում ընկած են հասարակությունը բնորոշող սոցիալական գործոնները: Ըստ այդմ, հասարակության քաղաքական վարքագիծը պայմանավորող գործոնների շարքում կրոնական, ռասայական, դասային և գենդերային գործոնների կոնկրետ համախումբը կարող է ունենալ վճռորոշ նշանակություն:

Քաղաքական մշակույթի ուսումնասիրման և գնահատման նպատակով ինքնության տարրեր օգտագործող աշխատանքների շարքում առանձնանում է նաև Բ. Սիլվերի և Կ. Դաուլիի հետազոտությունը, որտեղ հեղինակներն անդրադառնում են բազմաէթնիկ հասարակություններում քաղաքական մշակույթի չափմանը: Քաղաքական մշակույթում առկա արժեքային տարբերությունները հետազոտողները չափում են էթնիկական տարբերությունների միջոցով՝ իրենց հետազոտությունը կառուցելով Համաշխարհային արժեքների հետազոտության տվյալների վերլուծության հիման վրա: Նրանք քաղաքական մշակույթը չափում են 16 երկրներում ժողովրդավարության 10 հիմնարար արժեքների համեմատական վերլուծության միջոցով:[14] Սակայն այս պարագայում քաղաքական մշակույթի չափումը կամ գնահատումը, փաստորեն, հիմնվում է բացառապես էթնիկական միավորների արժեքային կողմնորոշումների

---

[13] **DeLeon Richard E., Naff Katherine C**., Identity Politics and Local Political Culture: The Politics of Gender, Race, Class and Religion in Comparative Perspective, San Francisco State University, 2003, p. 3.

[14] **Silver B., Dowley K.**, Measuring Political Culture in Multi-Ethnic Societies: Reaggregating the World Values Survey, Forthcoming in Comparative Political Studies, 2000.

վրա՝ անտեսելով այլ գործոնների նշանակությունը և ազդեցությունը ժողովրդավարական արժեքների ընկալման և յուրացման գործում: Միաժամանակ, այս մոտեցման դեպքում քաղաքական մշակույթի չափումը էթնիկական առանձնահատկությունների տեսանկյունից սահմանափակվում է միայն ժողովրդավարության ընկալման հարթությունում՝ դուրս թողնելով այլ քաղաքական վարչակարգերին հատուկ քաղաքական մշակույթների չափման անհրաժեշտությունը:

Ս. Կունն առաջարկում է ժողովրդավարական քաղաքական մշակույթները գնահատել ոչ թե արժեքային կողմնորոշումների տեսանկյունից, այլ կիրառել չափման ավելի ամուր գործիքներ, որոնք միևնույն ժամանակ կարող են նպաստել ժողովրդավարական մշակույթի կայացմանը: Խոսքը գործիքային աջակցության մասին է՝ ինչպես ժողովրդավարական, այնպես էլ ոչ ժողովրդավարական վարչակարգերում:[15]

Քաղաքական մշակույթի գնահատման խնդիրները դիտարկելիս հարկ է անդրադառնալ նաև Դ. Էլազարի մոտեցմանը, ով, ուսումնասիրելով ամերիկյան քաղաքական մշակույթը, այն բաժանում է երեք տիպերի՝ բարոյապաշտական (moralist), անհատապաշտական (individualist), ավանդապաշտական (traditionalist): Բարոյապաշտական մշակույթը խրախուսում է պետության կողմից քաղաքական, տնտեսական, սոցիալական միջամտությունը՝ հիմնավորելով դա *հանուն համընդհանուր բարեկեցության* տրամաբանությամբ: Անհատապաշտական մշակույթը, հակառակը, հանդես է գալիս պետության կողմից ցանկացած միջամտության սահմանափակման օգտին, քանի որ դա խանգարում է անհատական նախաձեռնություններին և մասնավոր ձեռներեցությանը: Իսկ ավանդապաշտապան մշակույթը հիմնվում է ստեղծված հասարակական կարգի պահպանման անհրաժեշտության վրա:[16] Դ. Էլազարի հարցադրման կապակցությամբ, թե արդյո՞ք անհատները կարող են իրենք իրենց սահմանափակել ըստ քաղաքական մշակույթի չափումների, Է. Դրանն

[15] **Kuhn S**., Unmasking Instrumental Support for Democracy: A New Approach for Measuring the Political Culture of Democracy (July 7, 2014), http://ssrn.com/abstract=2531713 (14.04.2015).

[16] **Elazar D.,** American Federalism: A View from the States. New York: Harper and Row. 1984, pp. 115-119.

առաջարկում է օգտագործել վարքաբանական մոտեցումը և ուսումնասիրությունը կառուցել երեք վարկածների հիման վրա՝

1. անհատական մակարդակում քաղաքական մշակույթի չափումը կարող է ավելի լավ բացատրել անհատների քաղաքական վարքագիծը,

2. ուղղակի չափումը քաղաքական մշակույթի ավելի լավ ցուցիչ է, քան քաղաքական մշակույթի ռեգիոնալ չափումը,

3. քաղաքական մշակույթը հնարավորություն է տալիս բացատրել անհատների քաղաքական վարքագիծը և նրանց դիրքորոշումները՝ առանց սոցիալ-տնտեսական բնութագրիչների:[17]

Այդուհանդերձ, Դ. Էլազարի դասակարգումը կարող է միայն սահմանափակ կիրառում ունենալ, քանի որ հատուկ է միայն ամերիկյան մշակույթին և այն չի կարող կիրառվել քաղաքական մշակույթի լիարժեք գնահատման համար այն հասարակություն-ներում, որտեղ քաղաքական մշակույթը հիմնված է այլ սկզբունքների ու արժեհամակարգի վրա:[18]

Այսպիսով, դիտարկելով քաղաքական մշակույթի ուսումնա-սիրման և գնահատման հիմնական մոտեցումները, կարելի է արձանագրել, որ դրանք մեծապես հիմնվում են հետազոտության սոցիոլոգիական մեթոդների վրա, որոնք լայն տարածում են գտել քաղաքագիտության մեջ: Թե՛ քանակական, թե՛ որակական սոցիոլոգիական մեթոդները, որոնք ենթադրում են տվյալների վերլուծություն, հարցումներ, հարցազրույցներ, փորձագիտական հետազոտություններ և այլ, որպես գործիք մեծապես նպաստում են քաղաքական մշակույթի հետազոտման և գնահատման արդյունքների արժանահավատության ապահովմանը՝ հիմնվելով մաթեմատիկական հենքի վրա:

Հարկ է նկատել, որ այդ աշխատանքներում կիրառված տեսությունները և դասակարգումներն առանձին վերցրած բացատրում են քաղաքական մշակույթի միայն առանձին հատկանիշներ կամ

---

[17] **Dran, Ellen M.,** Measuring political culture: An operationalization of the Elazar typology. Northern Illinois University, 1991p.

[18] **Zoellick T.,** Daniel Elazar, Bogus or Brilliant: A Study of Political Culture Across the American States, *Res Publica - Journal of Undergraduate Research,* **5**, 1, 2000, available at http://digitalcommons.iwu.edu/respublica/vol5/iss1/9 (17.04.2015).

առանձնահատկություններ, որոնք հատուկ են կոնկրետ հասարակություններին: Պատահական չէ, որ որոշ հեղինակներ առաջարկում են ընդհանրացնել քաղաքական մշակույթի չափման տարբեր մոտեցումները մշակույթի տեսության շրջանակներում՝ հաշվի առնելով նաև պատմաքաղաքական իրողությունների փոփոխության հանգամանքը:[19] Միակ տարրը, որն առկա է բոլոր մշակույթներում, լեզուն է, որի գործողության արդյունքը խոսույթն է, քաղաքական մշակույթի դեպքում՝ քաղաքական խոսույթը: Այն առկա է ցանկացած քաղաքական իրականության մեջ, կրում է քաղաքական մշակույթի ուղղակի ազդեցությունը, միաժամանակ իր զարգացման արդյունքում ինքն է ազդում քաղաքական մշակույթի զարգացման վրա: Հետևաբար քաղաքական խոսույթը տվյալ պահին արտացոլում է քաղաքական մշակույթի վիճակը, իսկ դինամիկայում՝ քաղաքական մշակույթի զարգացման ընթացքը: այդ իսկ պատճառով այն հնարավորություն է տալիս ուսումնասիրել, գնահատել, չափել նաև քաղաքական մշակույթը: Քաղաքական խոսույթն ուղղակիորեն արտացոլում է հասարակության քաղաքական մշակույթը, քանի որ քաղաքական մշակույթի կրած փոփոխությունները դրսևորվում են քաղաքական խոսույթում: Ուստի քաղաքական խոսույթը կարելի է օգտագործել որպես քաղաքական մշակույթի գնահատման գործիք:

Մշակույթը ձևավորվում և զարգանում է հաղորդակցության արդյունքում, որը երկկողմ գործընթաց է: Որպեսզի մեկ ուրիշն արձագանքի ձեր պատկերացումներին, ձեզ անհրաժեշտ է հաղորդակցության միջոց, որը հասանելի կլինի ռեսպոնդենտին, այսինքն՝ ինչ-որ ժեստ, ձայն, նշան և այլն, ընդհանուր դեպքում՝ լեզու: Հետևաբար քաղաքական մշակույթը ձևավորվում և զարգանում է քաղաքական հաղորդակցության արդյունքում՝ քաղաքական լեզվի միջոցով, որի գործողության արդյունքը քաղաքական խոսույթն է:

**Քաղաքական խոսույթը որպես քաղաքական մշակույթի գնահատման միջոց**

[19] **Kiss S.,** Measuring Political Culture and Values in Comparative Perspective: Operationalizing Group-Grid Cultural Theory, Montreal, 2014, available at http://ecpr.eu/Events/PanelDetails.aspx?PanelID=4173&EventID=94, (12.04.2015).

Ըստ Է. Բենվենիստի՝ խոսույթը լեզուն է գործողության մեջ, խոսքը, որը միավորում է լեզուն և այն յուրացրած մարդուն:[20] Այն հանդես է գալիս ոչ միայն որպես մարդու գործունեության մշակութային միջավայր, այլև որպես հասարակության քաղաքական կյանքի հետ սերտորեն կապված գործոն: Քաղաքական ինֆորմացիայի ձևավորումը, ազդեցությունը և փոխանցումը տեղի են ունենում լեզվի միջոցով: Քաղաքական մշակույթը հենվում է լեզվի բազմաձևության վրա: Այն հանդես է գալիս որպես գաղափարների, գաղափարախոսական կառույցների և հայեցակարգերի օբյեկտավորման միջոց: Լեզուն համարվում է քաղաքական մշակույթի գոյության և զարգացման հիմնական միջոցը և, որպես քաղաքական մշակույթի հիմնարար բաղադրիչ, ինչպիսիք են նաև պատմական քաղաքական փորձը, քաղաքական գիտակցությունը և վարքագիծը, միավորում է քաղաքական մշակույթի բոլոր կառուցվածքային տարրերը:[21] Քաղաքական մշակույթի լեզուն քաղաքական խոսույթն է (գրավոր և բանավոր խոսքը), որը, որպես քաղաքական մշակույթի ձևավորման նախապայման և արդյունք, փոխկապակցում է տարբեր քաղաքական երևույթները և դրանց մասին պատկերացումները մարդկանց գիտակցության մեջ լեզվական նշանների միջոցով:

Թ. Վան Դեյքը խոսույթը սահմանում է ոչ միայն որպես կապակցված տեքստ, այլև՝ «բարդ հաղորդակցական երևույթ, որը ներառում է նաև սոցիալական համատեքստ, ինչը պատկերացում է ձևավորում ինչպես հաղորդակցության մասնակիցների, այնպես էլ՝ ընկալման և արտաբերման գործընթացների մասին»:[22] 20-րդ դարի երկրորդ կեսին խոսույթի հարացույցը հասարակական գիտություններում ձեռք բերեց հեղափոխական բնույթ:[23] Ավանդական փիլիսոփայական հարացույցների հետ մեկտեղ տարբեր քաղաքական

---

[20] **Benveniste E.,** Problèmes de linguistique générale, Paris, N.R.F., *Bibliothèque des sciences humaines*, vol 1, 1966.

[21] **Зимин В.,** Структура политической культуры в оценках ученых, *Теоретические вопросы социально-гуманитарных наук 7, Вестник ВЭГУ,* 4 (48), 2010, сс. 7-12.

[22] **Ван Дейк Т.,** Язык. Познание. Коммуникация, М., 1989, с.13.

[23] **Петухова А.,** Возможности дискурс-анализа для изучения политической культуры властных элит Российской империи к. XIX - н. XX вв., доступен http://discourse-pm.ur.ru/avtor6/petuhova.php, (24.03.2014).

գործընթացներ և երևույթներ սկսեցին ուսումնասիրվել նաև խոսույթի հարացույցի շրջանակներում: Խոսույթի տեսությունը սկսեց ձևավորվել 1968 թվականի ֆրանսիական սոցիալական ճգնաժամից հետո, որպես հասարակության և մշակույթի ուսումնասիրման ստուրկտուրալիստական և հետստուկտուրալիստական հայեցակարգերի քննադատական վերլուծություն[24], սակայն հետագայում քաղաքական խոսույթը դիտարկվեց քաղաքական երևույթների կարևոր բաղադրատարր:[25]

Յ. Հաբերմասն առաջին էր, ով խոսույթի տեսությունը համակարգային ձևով կիրառեց ժողովրդավարության և իրավունքի տեսությունների մեկնաբանության համար: Իր «Հաղորդակցական ռացիոնալության տեսության» մեջ Յ. Հաբերմասը խոսույթը սահմանում է որպես հատուկ ձևի հաղորդակցություն, որի նպատակն իրականության անաչառ վերլուծությունն է, ինչպես նաև հաղորդակցության մասնակիցների հայացքների և գործողությունների քննադատական քննարկումը և հիմնավորումը: Հեղինակի առաջարկած «հաղորդակցական գործողության հայեցակարգի» համաձայն՝ «խոսույթն իրենից ներկայացնում է ընդհանուր համաձայնության հասնելու համար երկխոսության պատճառաբանված միջոց: Խոսույթում մենք փորձում ենք հիմնավորման միջոցով իրականացնել համաձայնություն, որը տեղի է ունեցել հաղորդակցական գործողության մեջ»[26]: Հաբերմասը խոսույթը դիտում է որպես ճշմարիտ գիտական գիտելիք ստանալու միջոց:[27] Հետևապես՝ քաղաքական մշակույթի ընկալման և գնահատման համար քաղաքական խոսույթի վերլուծությունը կարող է ապահովել արժանահավատություն: Հենվելով հաղորդակցական ռացիոնալութ- յան տեսության և խոսույթի վրա՝ Յ. Հաբերմասը զարգացրեց ժողովրդավարության մի

---

[24] **Ордуханян Э.,** Политический дискурс как средство политической коммуникации, Философия, политика, культура, М., 2011 сс. 222-236.

[25] **Howarth D.,** Discourse Theory in European Politics: Identity, Policy and Governance. *Basingstoke*: Palgrave Macmillan, 2005, pp. 316-350; **Bourdieu P.,** Language and Symbolic Power, Cambridge, 1991; **Фуко М.,** Интеллектуалы и власть, *Слова и вещи. Археология гуманитарных наук*, СПб., 1994; **Хабермас Ю.** Теория коммуникативного действия, М., 1981.

[26] **Хабермас Ю.** Моральное сознание и коммуникативное действие, СПб, 2000.

[27] **Habermas J.** The Theory of Communicative Action, Volume 1: Reason and the Rationalization of Society, Beacon Press, 1985.

մոդել, որը միավորում է ժողովրդավարական լեգիտիմությունը և դելիբերատիվ քաղաքականությունը: Նրա խոսույթի տեսությունը բարոյական տեսությունից ուղղվում է դեպի ժողովրդավարական տեսություն, որտեղ կարևորվում է ժողովրդի ինքնիշխանությունը: Ուստի ժողովրդավարության պայմաններում քաղաքական իշխանությունը ածանցվում է ժողովրդի հաղորդակցական իշխանությունից:[28] Ըստ Յ. Հաբերմասի, խոսույթի կիրառումը իրավունքի նկատմամբ հանգեցնում է ժողովրդավարության սկզբունքի: Միայն այն օրենքները կարող են լինել լեգիտիմ, որոնք արժանացել են քաղաքացիների համաձայնությանը, և այդ գործընթացը ուղեկցվել է օրինական քաղաքական խոսույթով:[29]

Այլ տեսակետից է կարևորում ժողովրդավարական քաղաքական մշակույթում քաղաքական խոսույթի տեղը Դ. Ֆրանցը. «Խոսույթը կենտրոնական դեր է կատարում արդարության և խաղաղության մասին ժողովրդավարական տեսլականում»:[30]

Քաղաքական խոսույթի մեկ այլ ընդգրկում է առաջարկում Ե. Շեյգալը: Նա նշում է, որ քաղաքական խոսույթի առարկայական ոլորտը ենթակայության և տիրապետության (իշխանության) միջև կապերը և դրանց գործակալներն են: Քաղաքական համայնքները, քաղաքական գործակալները, ավանդույթները, ծեսերը, նորմերը, գաղափարախոսությունը և ընդհանուր առմամբ քաղաքական մշակույթը կազմում են քաղաքական խոսույթի հարթությունը և բնութագրվում են սոցիալական ոլորտին պատկանելությամբ:[31] Ընդ որում, Դ. Գրինի պնդմամբ քաղաքական գործչի վերջնական նպատակը ոչ այնքան հանգուցային եզրույթների հասկացական

---

[28] **Flynn J.** Communicative Power in Habermas's Theory of Democracy, *European Journal of Political Theory*, 2004, 433-454.

[29] **Habermas J.** Between Facts and Norms: Contributions to a Discourse Theory of Law and Democracy, tr. William Rehg. Cambridge, MA: MIT Press. 1996, in n. 1, p. 107.

[30] **Franz D.** Discourse and Democracy /Bibliographic Review, *The Hedgehog Review*, Fall 2004, pp. 85-92.

[31] **Шейгал Е.,** Семиотика политического дискурса. Гнозис, М., 2004, с. 53.

բովանդակության պարզումն է, որքան հասցեատիրոջ ցանկալի արձագանքը հրահրելը:[32]

Նույն հարթությունում է քաղաքական խոսույթի իշխող և հարկադրող ուժի ուսումնասիրությունը՝ որպես հզոր իշխող ռեսուրս, հետևաբար և ցանկության, վախի և վերահսկողության օբյեկտ: Ինչպես նշում է Մ. Ֆուկոն, «Ցանկացած հասարակությունում խոսույթի գործածումը միաժամանակ վերահսկվում է, ենթարկվում է ընտրասերման, վերաբաշխվում է որոշակի գործընթացների օգնությամբ, որոնց հիմնական գործառույթները դրա իշխելու իրավազորության և դրա հետ կապված վտանգների չեզոքացումն է, դրանից բխող իրադարձությունների անկանխատեսելիության սահմանափակումը, դրա նմանատիպ սպառնողական նյութեղենությունից խուսափումը»:[33] Նա համարում է, որ բոլոր խոսույթներն ունեն քաղաքական երանգ, քանի որ համարվում են իշխանության դիսպոզիտիվ:

Ներկայումս քաղաքական խոսույթի վերլուծությունը (Ռ. Բարտ, Թ. Վան Դեյկ, Դ. Օստին) ավելի ու ավելի հաճախ է կիրառվում քաղաքագիտությունում՝ հիմնականում որպես գործիք հետազոտելու հասարակության խորհրդանշական համակարգերի (տեքստի) և սոցիալական գործընթացների (ինստիտուտների) միջև կապը: Կարելի է ասել, որ քաղաքական խոսույթը հանդես է գալիս որպես մեխանիզմ, որը դե ֆակտո ձևավորում է քաղաքականության մեջ հաստատվող խորհրդանշական համակարգեր, որպեսզի խորհրդանիշները փոխանցի ողջ հասարակությանը:[34]

Վերը նշված մոտեցումներում քաղաքական խոսույթի վերլուծությունը դիտարկվում է սեմիոտիկական և հաղորդակցական մոտեցումների տեսանկյունից: Ինչպես նշում է Մ. Իլյինը, «Քաղաքական խոսույթի վերլուծության առարկան քաղաքականությունն է՝ որպես սեմիոտիկական երևույթ, որպես նպատակին հասնելու

---

[32] **Green D.,** The language of politics in America: shaping the political consciousness from McKinley to Reagan. – Ithaca: Cornell Univ.Press, 1987, p. 2.

[33] **Фуко М.,** Воля к истине: по ту сторону знания, власти и сексуальности/ Работы разных лет, М. 1996, с. 51.

[34] **Петров К.,** Роль политического дискурса в политических изменениях, автореферат диссертации, М., 2009, с.4.

գիտակցված փոխգործունեություն: Այս պարագայում է, որ քաղաքականությունը դառնում է շփում, հաղորդակցություն և, իհարկե, իր բնույթով նաև՝ լեզու»:[35] Հետևապես՝ քաղաքական լեզուն կամ խոսույթը այն գործոններն են, որոնք արտացոլում են քաղաքականությունը և հանդիսանում են նաև քաղաքական մշակույթի կարևոր բաղադրատարր և նրա գնահատման միջոց:

Մեթոդաբանական տեսանկյունից քաղաքական մշակույթի չափման հարցում խոսույթի վերլուծության մեթոդների (համատեքստային, կոգնիտիվ, գաղափարաբանական, ինտենտ, նկարագրական, և այլ) շարքում առանձնանում է խոսույթի քննադատական վերլուծության մեթոդը (ԽՔՎ, Critical Discourse Analysis), որը, լինելով խոսույթի ուսումնասիրման միջդիսցիպլինար մոտեցում, լեզուն դիտում է որպես սոցիալական պրակտիկայի ձև: Այս մեթոդը համադրում է սոցիալական պրակտիկան և լեզվական պրակտիկան ու կենտրոնանում է այն խնդրի վրա, թե ինչպես են ձևավորվում հարաբերությունները հասարակության և իշխանությունների միջև և որքանո՞վ են դրանք պայմանավորված լեզվի օժանդակությամբ:[36]

ԽՔՎ-ն գլխավորապես ուսումնասիրում է, թե ինչպես են սոցիալական և քաղաքական իրականության մեջ տեքստի և խոսքի միջոցով դրանորվում և հակադրության մեջ մտնում հասարակական իշխանության չարաշահման, տիրապետության, անհավասարության երևույթները[37], ինչն ուղղակի կապ ունի քաղաքական մշակույթի հետ: Ուստի քաղաքական մշակույթի գնահատման համար կարելի է հիմք ընդունել խոսույթի քննադատական վերլուծության հետևյալ հիմնական հաստատագրումները՝

- ԽՔՎ մեթոդը հետազոտում է սոցիալական, քաղաքական խնդիրները,

---

[35] **Ильин М.,** Политический дискурс как предмет анализа, *Политическая наука*, 3, 2002, 11.

[36] **Fairclough N.**, Critical Discourse Analysis: The Critical Study of Language. Routledge; 2 edition, 2010.

[37] **Van Dijk T.**, Introduction: What Is Critical Discourse Analysis? *Critical Discourse Analysis*, pp. 352-365, available at: http://www.discourses.org/OldArticles/Critical%20discourse%20analysis.pdf (19.05.2015).

- Իշխանական հարաբերությունները խոսութային դաշտում են,
- Խոսույթը ձևավորում է հասարակություն և մշակույթ,
- Խոսույթն իրականացնում է գաղափարական աշխատանք,
- Խոսույթը պատմական երևույթ է,
- Տեքստի և հասարակության միջև կապը միջնորդավորված է,
- Խոսույթի վերլուծությունը բացատրական է,
- Խոսույթը սոցիալական գործողության ձև է:[38]

Այդ հաստատագրումների հիման վրա 2000-ականներին սկսեցին քաղաքական խոսույթի ուսումնասիրությունը կիրառել քաղաքական վարչակարգերի գնահատման նպատակով:

**Քաղաքական խոսույթը որպես քաղաքական վարչակարգերի ուսումնասիրման միջոց**

Վարչակարգային տարբերությունները քաղաքական իրականության մեջ դրսևորվորվում են նաև խոսույթի առանձնահատկություններով, ինչն ուղղակիորեն ազդում է քաղաքական վարքագծի և արժեհամակարգի ձևավորման վրա:

Հիմք ընդունելով քաղաքական մշակույթի տարակերպ դրսևորումները տարբեր քաղաքական վարչակարգերում՝ կարելի է պարզել քաղաքական խոսույթի առանձնահատկությունները ըստ վարչակարգերի, ինչը հնարավորություն կտա սահմանել քաղաքական խոսույթի միջոցով վարչակարգերի և դրանց համապատասխանող քաղաքական մշակույթների գնահատման համար անհրաժեշտ չափանիշները:

Խորհրդային ամբողջատիրության խոսույթում, որտեղ գերակա էր հպատակային քաղաքական մշակույթը, հասարակությունը բաժանվում էր «յուրայինների» և «օտարների», որի հիմքում դրվում էին դասակարգային և գաղափարական տարբերությունները, իսկ հետո «օտարները» կարող էին վերածվել «ժողովրդի թշնամու», հետևապես՝

[38] **Fairclough N., Wodak R.** (1997). Critical discourse analysis. *Glasgow University Media Group*. (1980). T. A. van Dijk (ed.), Discourse Studies. More Bad News. London: Routledge A Multidisciplinary Introduction, Vol. 2. and Kegan Paul. Discourse as Social Interaction Glasgow University Media Group. 1982, pp. 258-284.

բոլոր նրանք, ովքեր դեմ էին իշխող քաղաքական համակարգին դառնում էին այլախոհներ, որոնց նկատմամբ գործադրվում էին ամենաբռնի միջոցները:[39] Այս երևույթը ամբողջատիրական խոսույթի առանցքային հատկանիշներից է: Ամբողջատիրության խոսույթն առանձնանում է իր միակողմանիությամբ, ինտերակցիայի բացակայությամբ և հարկադրական բնույթով:

Այդ առումով ուշագրավ է Լ. Լամսի, Գ. Քրովելսի և Հ. Շերբանի աշխատանքն ամբողջատիրության և ավտորիտարիզմի խոսույթների համեմատության վերաբերյալ, որտեղ հեղինակները համեմատական վերլուծության են ենթարկում ամբողջատիրական և ավտորիտար խոսույթները և դրանց հետևանքները՝ նախկին Արևելյան Գերմանիայի, Հարավսլավիայի, Ռումինիայի, Լիտվայի, Չինաստանի, Հյուսիսային Կորեայի, Ֆիլիպինների, Բիրմայի, Կուբային և Թունիսի դեպքերի հիման վրա: Հեղինակները կոգնիտիվ համեմատական մեթոդով հետազոտում են քաղաքական խոսույթը ոչ միայն աշխարհագրական, այլև ժամանակագրական տեսանկյունից, ինչը հնարավորություն է տալիս համեմատել անցյալի և ներկայի խոսույթները: Նրանք ցույց են տալիս խոսույթի դրսևորումները մշակույթի և կրթության, լրատվամիջոցների և պաշտոնական (իշխանական) ու քաղաքական ոլորտներում:[40] Կոգնիտիվ համեմատական մեթոդը հնարավորություն է տալիս վերհանել քաղաքական խոսույթի առանձնահատկությունները և դրանք համեմատել իշխանության գործունեության հետ, այսինքն՝ ինչ է ասվում և ինչ է արվում: Արդյո՞ք քաղաքական իշխանության «խոսքը» համապատասխանում է իրականության մեջ նրա «գործունեությանը»:

Ս. Հոլը քաղաքական խոսույթի համեմատական վերլուծության մեթոդով հետազոտել է ավտորիտար քաղաքական վարչակար-

---

[39] **Коровкова О.** «Свои чужие» в дореволюционном политическом дискурсе большевиков и советском тоталитарном дискурсе, *Политическая лингвистика,* 4, 2011, доступен http://cyberleninka.ru/article/n/svoi-chuzhie-v-dorevolyutsionnom-politicheskom-diskurse-bolshevikov-i-sovetskom-totalitarnom-diskurse#ixzz3XZT0GPsy, (17.04.2015).

[40] **Lams L., Crauwels G., Şerban H.,** Totalitarian and Authoritarian Discourses: A Global and Timeless Phenomenon? Oxford, Bern, Berlin, Bruxelles, Frankfurt am Main, New York, Wien, 2014.

գերը Ռուսաստանում, Բելառուսում, Ղազախստանում և Ուկրաինայում: Այս դեպքում հեղինակը օգտագործել է խոսույթի վերլուծության կոգնիտիվ-քարտեզավորման մեխանիզմը, այն է՝ տարբեր հասարակություններում խոսույթի միանման տարրերի բացահայտումը և դրանց միջև համեմատական կապը հասարակական-քաղաքական գործընթացների տեսանկյունից: Այս մեխանիզմի կիրառման արդյունքում Ս. Հոլը նկատում է, որ վերը նշված պետությունները միմյանցից սովորում և իրար են փոխանցում իրենց ավտորիտար պրակտիկան՝ ստեղծելով միանման ինստիտուտներ, և այդ գործընթացները միջնորդավորվում են քաղաքական խոսույթով:[41]

Ավտորիտար քաղաքական մշակույթի գնահատման գործում ուշագրավ է նաև Դ. Լյուիսի մոտեցումը, ով նշում է, որ արդի շրջանում հաճախ ավտորիտար վարչակարգերի պայմաններում գործում են հասարակական կազմակերպություններ, ինչը հակասում է ժողովրդավարության տեսության սկզբունքներին, որոնց համաձայն հասարակական կազմակերպությունները ժողովրդավարական վարչակարգերին բնորոշ ինստիտուտներ են: Այդպիսի քաղաքական փոխազդեցության բացատրության համար հեղինակը հիմվում է Յունգի՝ քաղաքացիական հասարակության մասին երկակի մոտեցման վրա[42]: Այդ մոտեցումը ընդգծում է քաղաքացիական հասարակության խոսութային դերը, որն առանցքային նշանակություն ունի հարկադրման և համագործակցության դինամիկայի ձևավորման համար, որին բախվում են հասարակական կազմակերպություններն ավտորիտար վարչակարգերում:[43]

Յուրահատուկ դրսևորումներ ունի ավտորիտարիզմի խոսույթը Սինգապուրի դեպքում: Այն բնորոշվում է իշխանության կողմից քաղաքացիական իրավունքների և ազատությունների ճնշմամբ՝ հիմնվելով օրենքների և իշխանության լեգիտիմության վրա: Սինգապուրյան ավտորիտար խոսույթի առանձնահատկությունն այն

[41] **Hall S.**, Can Authoritarian Regimes Learn? The cases of Belarus, Kazakhstan, Russia and Ukraine, 2014, available at: http://etheses.bham.ac.uk/5502/, (17.05.2014).
[42] **Young I. M.** Inclusion and Democracy, (New York: Oxford UP), 2001.
[43] **Lewis D.,** Civil Society and the Authoritarian State: Cooperation, Contestation and Discourse, *Journal of Civil Society*, **9**, 3, 2013, 325-340.

է, որ իշխանությանը հաջողվում է հպատակային քաղաքական մշակույթի պայմաններում պահպանել հավասարակշռությունը օրինականության և իրավունքների ճնշման պարադոքսի միջև: Ավտորիտար խոսույթի պայմաններում սինգապուրյան տնտեսական զարգացման բանալին թերևս գտնվում է քաղաքական կարգի կայունության մեջ, երբ իշխանությունը վայելում է լայն հասարակական լեգիտիմություն: Քաղաքական ինստիտուտների արդյունավետ գործունեությունը, թեկուզև ավտորիտար խոսույթի առկայությամբ, սինգապուրյան համակարգի առանձնահատկություններից է, ինչը պայմանավորված է նաև մշակութային հիմքերով: Հեղինակը Սինգապուրը դիտում է որպես ավտորիտար իրավական պետություն, որտեղ համակարգի կայունության հիմքը իշխանության լեգիտիմությունն է:[44] Սինգապուրը իր կառավարման մոդելով առանձնահատուկ է, որտեղ ավտորիտար խոսույթը ոչ թե խոչընդոտում, այլ նպաստում է քաղաքական կարգի կայունությանը և տնտեսական զարգացմանը:

Ուշագրավ է նաև Ժ. Լուի և Շ. Տյանչյանի մոտեցումը ավտորիտար վարչակարգի գնահատման վերաբերյալ[45] որի հման վրա նրանք ուսումնասիրել են մինչժողովրդավարական անցման շրջանում գաղափարական և խոսութային պայքարը ավտորիտար Չինաստանում: Ըստ նրանց, ժողովրդավարության սահմանափակ փորձ ունեցող Չինաստանում իշխանությունը փորձում է քողարկել իր ավտորիտար բնույթն՝ օգտագործելով *խնամակալական խոսույթ*, ինչը վկայում է կեղծ խոսույթի գոյության մասին: Հեղինակները կիրառել են ազգային հարցման մեխանիզմներ: Ժողովրդի շրջանում անցկացված հարցման արդյունքների հիման վրա նրանք պարզել են, որ չինական կառավարությունը խոսույթն իրականացնում է կրթության և լրատվամիջոցների օգտագործմամբ, ինչպես նաև կիրառելով կոնֆուցիական և լենինյան գաղափարները, որոնց միջոցով իր

---

[44] **Wilson S,** A Review of Authoritarian Rule of Law: Legislation, Discourse and Legitimacy in Singapore by Jothie Rajah, *Indiana Journal of Global Legal Studies,* **21,** 1, 2014, 297-301.

[45] **Jie Lu, Tianjian Shi.** The Battle of Ideas and Discourses before Democratic Transition: Different Democratic Conceptions in Authoritarian China, *International Political Science Review*, **36**, 1, January, 2015, 20-41.

ժողովրդին խնամակալական խոսույթ է ներշնչում, որն ավտորիտար խոսույթ է, քանի որ հիմնվում է կեղծ ինտերակցիայի վրա: Սակայն չին ժողովուրդն այդ առանձնահատուկ խոսույթը փոքրիշատե ընկալում է որպես ժողովրդավարական: Այս երևույթը վկայում է այն մասին, որ ավտորիտար քաղաքական մշակույթում քաղաքական խոսույթի վերահսկողական և մանիպուլյատիվ գործառույթներն ավելի խորն են արտահայտված: Ուստի միանշանակ կարելի է պնդել, որ ավտորիտար քաղաքական վարչակարգերում քաղաքական խոսույթը հիմնականում կրում է կեղծ բազմակողմանի բնույթ, որը հիմնվում է ինտերակցիայի նմանակման վրա: Ըստ հեղինակների, չինացիները կարծում են, որ իրենց կառավարությունը քիչ թե շատ ժողովրդավարական է, ինչը, սակայն իրականում ժողովրդավարության պատրանք է:[46] Ավտորիտար վարչակարգում խոսույթն իր դրսևորմամբ կարող է լինել կեղծ ժողովրդավարական, իսկ գործնական քաղաքականությունը հպատակային և վերահսկողական, ինչն էլ պայմանավորում է քաղաքական խոսույթի և գործնական քաղաքականության անհամապատասխանությունը:

Ինչ վերաբերում է ժողովրդավարական վարչակարգին, որտեղ առկա է քաղաքացիական մշակույթ, Դ. Ջոնսոնը և Ռ. Ջոնսոնը նշում են, որ ժողովրդավարական քաղաքական մշակույթում քաղաքական խոսույթն ուղղված է ժողովրդավարության ամրության բարձրացմանը: Հեղինակները քաղաքական խոսույթը դիտում են որպես ժողովրդավարության դեպքում որոշումներ ընդունելու մեթոդ՝ օգտագործելով «կառուցողական հակասության» մեխանիզմը, որը ենթադրում է, որ ժողովրդավարության դեպքում առկա տեսակետները կարող են իրար հակասել մինչ որոշման կայացումը, սակայն այդ հակասությունը հաղթահարելի է կառուցողական խոսույթի միջոցով: Կառուցողական բանավեճը ստեղծում է դրական վերաբերմունք հակադիր կողմի դիրքորոշումների նկատմամբ: Այս դեպքում քաղաքական խոսույթը հիմնվում է այն նախապայմանի վրա, որ քաղաքական փոքրամասնության իրավունքները կպաշտպանվեն մինչև այն պահը, երբ նորից հնարավոր լինի նոր որոշում կայացնել: Հակադիր դիրքորոշումներ ունեցող կողմերի միջև կառուցողական

[46] **Jie Lu, Tianjian Shi**., ....

բանավեճը ստեղծում է դրական միջավայր, որտեղ փոքրամասնության իրավունքները հարգվում և պաշտպանվում են:[47] Ուստի ժողովրդավարական մշակույթում քաղաքական խոսույթը առանձնանում է իր կառուցողականությամբ, բազմակողմանիությամբ և ինտերակցիայով, այսինքն՝ իշխանության և հասարակության միջև հետադարձ կապը ամուր է, իսկ հասարակության քաղաքական մասնակցությունը իրական: Միևնույն ժամանակ իշխանության քաղաքական խոսույթը և գործնական քաղաքականությունը համապատասխանում են միմյանց: Քաղաքական խոսույթի միջոցով քաղաքական վարչակարգերի գնահատման աշխատանքների շարքում ուշագրավ է նաև Կ. Կնուտսենի և Հ. Նիգարդի աշխատանքը, որում հեղինակները, ուսումնասիրելով վարչակարգերի ինստիտուցիոնալ բնութագրիչները, հանգում են եզրակացության, որ կիսաժողովրդավարական (ավտորիտար) վարչակարգերն ավելի կարճատև են, քան ամբողջատիրական և ժողովրդարական վարչակարգերը: Որպես չափման մեխանիզմներ՝ նրանք օգտագործում են վարչակարգի ձևի և մոդելի առանձնահատկության օպերացիոնալացումը՝ օգտագործելով Գեյթսի և այլոց կողմից առաջարկված՝ «վարչակարգի կյանքի միջին տևողությունը՝ ըստ նրա ձևի (1800-2000)» մոդելը:[48] Հեղինակներն ընդգծում են նաև, որ կիսաժողովրդավարական (ավտորիտար) վարչակարգերը առավելապես անկայուն են:[49]

Քաղաքական խոսույթի հիման վրա վարչակարգերի գնահատման վերոհիշյալ աշխատանքների ուսումնասիրությունը թույլ է տալիս ձևակերպել քաղաքական խոսույթի բովանդակության և վարչակարգերի տեսակների համապատասխանության հետևյալ երեք խմբերը՝

---

[47] **Johnson David W. and Johnson Roger T.** Civil Political Discourse In A Democracy: The Contribution of Psychology, *Peace & Conflict: Journal of Peace Psychology*, 6(4), 2000, 291-317.

[48] **Gates S., Havard H., Mark P.J., and Havard S.** Institutional Inconsistency and Political Instability: Polity Duration, 1800–2000. *American Journal of Political Science*, 50(4), 2006, 893–908.

[49] **Knutsen C.H., Nygard H.M.,** Institutional Characteristics and Regime Survival: Why Are Semi-Democracies Less Durable Than Autocracies and Democracies? *American Journal of Political Science*, **59,** 3, July, 2015, 656–670.

- եթե քաղաքական խոսույթը միակողմանի է, մենախոսական, առանց ինտերակցիայի և ունի հարկադրական բնույթ, ապա այն ամբողջատիրական է, ինչը ենթադրում է նահապետական և հպատակային քաղաքական մշակույթ (ամբողջատիրական վարչակարգ),
- եթե քաղաքական խոսույթը հիմնված է կեղծ բազմակար ծության, կեղծ ինտերակցիայի վրա, որտեղ իրական քաղաքական-ությունը տարբերվում է ներկայացվող խոսույթից, ապա այն ավտորիտար է և ենթադրում է հպատակային կամ կեղծ մասնակցային քաղաքական մշակույթ (ավտորիտար վարչակարգ),
- եթե քաղաքական խոսույթը հիմնված է բազմակարծության, կառուցողականության վրա և տեղի է ունենում բազմակողմանի հաղորդակցությամբ, որի դեպքում գործնական քաղաքականությունը համապատասխանում է քաղաքական խոսույթին, ապա այն ժողովրդավարական է և ենթադրում է քաղաքացիական և մասնակցա-յին քաղաքական մշակույթ (ժողովրդավարական վարչակարգ):

Այդուհանդերձ, քաղաքական վարչակարգերի գնահատման վերը դիտարկված ուսումնասիրությունների արդունքները վկայում են, որ տարբեր երկրներում անգամ նույն վարչակարգի գնահատման համար բացի վերը բերված չափանիշներից, հարկ է հաշվի առնել ևս երկու գործոն՝ տարածաշրջանային և ազգային: Ակնհայտ է, որ հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրների համար նման մոտեցումը ևս անհրաժեշտ է, քանի որ այդ երկրներն անցել են եզակի ուղի՝ կոմունիստական վարչակարգից այլ վարչակարգի: Ս. Հոլի վերոհիշյալ աշխատանքը Բելառուսի, Ղազախստանի, Ռուսաստանի և Ուկրաինայի դեպքերի վերաբերյալ ոչ միայն հաստատում է այդ պնդումը՝ բացահայտելով այդ երկրներում քաղաքական խոսույթների ոչ միայն ընդհանրություններն, այլև տարբերությունները: Այդ երկրներում արձանագրված արդյունքները համեմատելով վերոհիշյալ մյուս՝ ոչ հետխորհրդային երկրներում արձանագրված արդյունքների հետ կարելի է տեսնել էական տարբերություններ, որոնց զգալի մասը ընդհանուր է հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրների համար: Հետևաբար, թեև վերոհիշյալ աշխատանքներում առկա են մի շարք մոտեցումներ ու սկզբունքներ, որոնք կիրառելի են հետխորհրդային

տրանսֆորմացիայի երկրներում կիրառվող քաղաքական խոսույթների միջոցով վարչակարգերի ուսումնասիրության համար, սակայն, միաժամանակ, այդ երկրների դեպքերի ուսումնասիրության համար պահանջվում է նաև հաշվի առնել առանձնահատուկ հանգամանքների գործոնը: Հակառակ դեպքում կարող է կրկնվել հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրների վարչակարգերի ուսումնասիրության նպատակով անցած դարի 90-ականներին դասական մեթոդների կիրառման փորձը, երբ այդ գործոնի անտեսումը հանգեցրեց արմատական անճշտությունների ու սխալների ինչպես այդ երևույթի ուսումնասիրման, այնպես էլ զարգացումների կանխատեսման ու ճշգրտման ժամանակ:[50] Առանձնահատուկ հետաքրքրություն է ներայացնում նաև դասական մեթոդներով և քաղաքական խոսույթի հիման վրա վարչակարգերի ուսումնասիրությունների արդյունքների համեմատումը: Որպես առաջինի օրինակ կարելի է օգտագործել Տ. Թորոսյանի և Հ. Սուքիասյանի արդեն հիշատակված հետազոտությունը[51], որտեղ հեղինակներն առանձնացնում են հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրների երեք խումբ՝ իրենց վարչակարգային առանձնահատկություններով, գործընթացի երեք փուլ և երեք հարացույց:

## Եզրակացություն

1. Հասարակական գործընթացների վրա նոր աշխարհակարգի ձևավորման համար մրցակցության զգալի ազդեցությունն, ինչպես նաև ժամանակակից ավտորիտար վարչակարգերի կողմից կեղծ ժողովրդավարական խոսույթի հաճախակի օգտագործումը պահանջում են վարչակարգերի գնահատման մեխանիզմների կատարելագործում՝ ավելի ճշգրիտ արդյունքներ ապահովելու նպատակով:

---

[50] **Թորոսյան Տ., Սուքիասյան Հ.,** Հետխորհրդային տրանսֆորմացիայի երեք փուլերը, երեք խմբերը և երեք հարացույցները, *Հայկական քաղաքագիտական հանդես*, 1, 2014, էջ 20-34:

[51] **Թորոսյան Տ., Սուքիասյան Հ.,…**

2. Վարչակարգերի գնահատման և դասակարգման նոր մարտահրավերների հաղթահարման նպատակով կարող են լրամշակվել կիրառվող դասական մոտեցումներն, ինչպես նաև օգտագործվել այլընտրանքային մոտեցումներ, մասնավորապես, քաղաքական մշակույթի ուսումնասիրության հիման վրա:

3. Թեև ժողովրդավարության կայացման ու զարգացման խնդիրների ուսումնասիրության նպատակով քաղաքական մշակույթի ուսումնասիրությունը կիրառվում է անցած դարի 80-ական թվականներից, սակայն վարչակարգերի գնահատման և դասակարգման նպատակով ակտիվորեն օգտագործվում է միայն վերջին շրջանում:

4. Թեև քաղաքական խոսույթի հիման վրա վարչակարգերի ուսումնասիրությանը նվիրված աշխատանքներում դիտարկվում են ինչպես ավտորիտար և ամբողջատիրական, այնպես էլ ժողովրդավարական վարչակարգեր, այդ թվում և մի քանի հետխորհրդային երկրների օրինակներ, սակայն այդ մեթոդի հիման վրա հետխորհրդային երկրների վարչակարգերի համալիր ուսումնասիրություններ դեռևս չկան: Հետևաբար, այդ ուսումնասիրությունների տեսակետից դեռևս բացահայտված չեն այդ խմբի երկրների ընդհանուր և մասնակի առանձնահատկությունները:

5. Հետխորհրդային երկրների վարչակարգերի համալիր ուսումնասիրությունը պետք է հաշվի առնի դասական մեթոդներով դրանց ուսումնասիրությունների ինչպես արդյունքները՝ որպես համեմատական ուսումնասիրության հիմք, այնպես էլ փորձը, որի արդյունքում պարզ դարձավ, որ թեև հետխորհրդային տրանսֆորմացիան ենթարկվում է անցումագիտության մի շարք ընդհանուր սկզբունքների, սակայն ունի նաև էական առանձնահատկություններ, որոնց անտեսումը հանգեցնում է արմատական անճշտությունների ու սխալների ինչպես այդ երևույթի ուսումնասիրման, այնպես էլ զարգացումների կանխատեսման ու ճշգրտման ժամանակ:

# Assessing the Regimes of Post-Soviet Transformation Countries Based on Political Discourse: Possibilities and Challenges

EMIL ORDUKHANYAN
*Yerevan Brusov State University of Languages and Social Sciences, Armenia*

The article explores the prospects of regime assessment based on political discourse in terms of increasing the accuracy of assessment results. The urgency of the issue is conditioned by the decrease in the efficiency of classical assessment methods. This happens due to new challenges resulting from deepened rivalry and flawed practices of democratic political discourse for the formation of new world order. The research results show that whereas there are case studies on all three types of regimes based on political discourse, they do not reveal the peculiarities and patterns of the use of political discourse for assessing the regimes of post-Soviet transformation countries. To this end it is proposed to assess the regimes of post-Soviet transformation countries based on political discourse with full range. The accuracy of the results can be best evaluated while comparing them with those obtained using classical assessment methods.